

«Բոլոր գիտությունները զարգանում են փեղերական հեղափոխությունների շնորհիվ»

Իրականում ու վիրտուալը այնքան են միախառնվել, որ դժվար է տարանջատել մեկը մյուսից: Գիտական հարթության մեջ վիրտուալ ասվածն այլ բնորոշում է ստանում: Որ աստղագիտությունը շքեղություն է մեր երկրի համար, արդեն ասվել է, գաղտնիք չէ նաև, որ գիտության զարգացմանը խոչընդոտում են հիմնականում ֆինանսական խնդիրները: Բայց և այնպես, աստղագիտության ոլորտում իր ուրույն ավանդույթն ունեցող Բյուրականի աստղադիտարանն այսօր էլ փորձում է քայլել ժամանակին համընթաց:

«Չայաստանը Վիրտուալ աստղադիտարանների միջազգային այլանսի 17 անդամներից մեկն է, աշխարհում այդ ոլորտի առաջատարներից»,- տեղեկացնում է այլանսի գործադիր կոմիտեի անդամ, հայկական վիրտուալ աստղադիտարանի ծրագրի հիմնադիր և ղեկավար **ԱՐԵՎ ՄԻՋԱՅՆԵՅԱՆ:**

Վիրտուալ աստղադիտարանների միջազգային այլանսը ստեղծվել է 2002-ին: Չայկական ազգային վիրտուալ աստղադիտարանն այլանսին է միացել 2005-ին: Այս համագործակցության շնորհիվ Չայաստանը մասնակցում է աշխարհում վիրտուալ աստղադիտարանների զարգացմանը:

Տիեզերական հետազոտությունները

կարևոր դեր են խաղում նաև այլ գիտությունների զարգացման գործում, ավելին, ըստ աստղագետ Արեգ Միքայելյանի՝ ապագայում աստղագիտությունը դառնալու է ամենակարևոր գիտությունը: Անդրադառնալով վիրտուալ աստղադիտարաններին, նա նշեց, որ աստղագիտությունն այսօր զարգանում է հենց այդ ուղղությամբ: Ի տարբերություն առանձին դիտումների, ժամանակակից այս մեթոդը պարունակում է ամբողջական ուսումնասիրություն: **«Բռ առջև վիրտուալ երկինքն է, որը բազմիցս նկարահանվել է տարբեր աստղադիտակներով, տարբեր մեթոդներով, էլեկտրամագնիսական ալիքների տարբեր տիրույթներում»,**- ասում է նա:

Չայկական վիրտուալ աստղադիտարանը ստեղծվել է Մարգարյանի շրջահայրության, Բվկայնացման և հայկական աստղագիտական խոչորագույն տվյալների շտեմարանի հիման վրա: **«Մարգարյանի սպեկտրի շրջահայրությունը եզակի դիտողական նյութ է ամբողջ աշխարհի աստղագիտության մեջ և հնարավորություն է տալիս ուսումնասիրելու 20 միլիոն տիեզերական մարմինների բնույթը»:**

Սա չի՞ նշանակում, որ վիրտուալ աստղադիտարանների զարգացումը երկրորդական է դարձնում ավանդական աստղադիտարանների դերը: **«Իհարկե՝**

ոչ, վիրտուալ աստղադիտարանն աշխատում է այդ աստղադիտարանների տեղեկատվության հիման վրա՝ և՛ ճակվին, և՛ ժամանակակից, և՛ ապագայի»,- ասում է Արեգ Միքայելյանը, ընդգծելով աստղագիտության մեկ այլ՝ համաշխարհային համացանցի նոր համակարգի մշակման աշխատանքներին մասնակցելու կարևորությունը: Աստղագետը փորձում է բացատրել, թե ինչու և ինչպես է իրականանում միջազգային ասպարեզում նշված փոփոխությունը. **«Քանի որ ինֆորմացիան անհամեմատ արագ է զարգանում, պահանջվում են նոր լուծումներ՝ ինֆորմացիայի փոխանակման արագությունը բավարարելու համար: Ներկայումս Հվեյցարիայում զտնվող միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնն աշխատում է համաշխարհային համացանցի նոր համակարգ մշակելու ուղղությամբ: Ցայլերի տեղափոխման սկզբունքից անցում է կատարվում ծառայողական համակարգիչ (server) ունենալու սկզբունքին»:** Արեգ Միքայելյանը մասնավորապես ընդգծում է, որ միջուկագետ ֆիզիկոսների աշխատանքներին միացել են նաև աստղագետները, որոնք էական նշանակություն են տալիս վիրտուալ աստղադիտարանում համացանցային սկզբունքի կիրառմանը:

Արմինե ՍԱՐԳՍՅԱՆ